




Բուս և օրնա-թուփեր

Ապստոլական հայ ճանապարհորդներ

Կրտսեր

Զոյ

Հայ





Մանկություն

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՆԵՐ

Համաշխարհային բռնութեան ընդդէմ Ապստոլական :

ԱՅՏԱԿ-ի Հանձնաժողովը .

Թիպար 12



Թիւ 11 Թիպար-ի լուծումը .

— Անդառնալի վերաբերմամբ մեզ
մարդ կամ ազգ է նա որ թուր
քի ծերեայ վիճակէն իրան զա՛
վերցնել չընդհանր .



տուգվել է փառս Ալաշի, պատրաստված մաս- նաւոր խարդիկների վրայ. — Ռուսիան՝ մէկ լա- զիստանցի գեղուհի, Անգլիան՝ մէկ շնգիւս- տանցի պարարտ կին, Ֆրանսիան՝ մի մատա- գասկարցի կոյս, Գերմանիան և Աւստրիան մի- մի բանւոր աղջիկներ, Իտալիան՝ Հապէշիստա- նում զոհ տուած իր զինւորներից մէկի այրին:

7) Օգոստեբուրգեան վերաբերեալ յատուկ աղօթք կատարելու համար Անգլիան հրաւիրել է շնգիւստանից մի ակնաւոր Բուդդայիստ կրօնաւոր:

8) Արմա-քաղաքական աւետարանից կտոր- ներ պիտի կարդացվեն միմիայն Անգլիայում. կարդացողները պիտի լինին ծերակոյտից յայտնի լորդեր և երեսփոխաններից միշտ նոյն... ան- նըման ԱՏմէդ-Բարտէտը:

9) Պետութիւնների կողմից պիտի հաշակվէ այդ օրը իբրև մեծ տօն և խստիւ պիտի ար- գելվէ ժողովրդին գործով պարսպվել, ալ ընդհանաւ կը յարգել այդ մեծ Նոր-Տօնը պիտի լինի պարտաւորիչ:

Սուլթանը իմացած լինելով այդ հանգի- սաւոր Տօնի մասին, առաջարկում է Պետու- թիւններին ուղարկել մահմետական մօլլաներ իր կողմից, բացի Անգլիայից, որովհետեւ ար- դէն ԱՏմէդ-Բարտէտը մօլլայից աւելի աջող կարող է կատարել այդ գերը: Նոյնպէս Պե- տութիւնների վեց մեծ ներկայացուցիչներին մատուցանելու է մի-մի սիրուն հարէմուհիներ, (որոնց դեռ մի քանի ամիս առաջ միայն գե- րեվարել էր հայերից): Իբրև զօգոստեբուրգեան նրանց մատուցած այդ միջազգային Տօնին: Իսկ Պաարիարը Օրմանեանին ուղարկելու է Ռու- սաստան, իբրև սիրահար մի մարդու այդ երկ- րի կաւաւարութեան, որտեղ նա իր պեր- ճախօս քարոզով պիտի դուռատէ սուլթանի բարեսրտութիւնը և տարածած բարեգթու- թիւնը դէպի իր սիրած հայ հպատակները, որոնք անընդունակ վայելու այդ օրհնութիւնը, միշտ անբաւականութիւն են յայտնել, նոյնպէս սուլթանի արեւատութեան համար գլխաւոր բարեմաղթող պիտի լինի նորին Սրբազանու- թիւն Պաարիարը Օրմանեան:

ԾԻԾԱՆ.

ԴԻՆՍ ՈՒ ԴԻՆՆ:

Ուղղակի աղբիւրէ հաստատապէս կիմանամ թէ, ամեն երկրի, ամեն տեղի ամեն մեծ մար- դերու հետ նամակագրութիւն ունեցող և մեծ անուններու շուքին տակ կեկիլ սիրող Միւսս Զերազ հանգուցեալ Ներսէս պատրիարքէն մօ- տերս ստացած է մի նամակ որ ձեռքս կը գըտ- նուի այժմ: Ահա այդ անգրչիւրիմեան նամակի բովանդակութիւնը. —

«Ստիպեալ կը գրեմ նամակս, Միւսսիկ (Զերազ ինքն է տարածած թէ, Ներսէս «Մի- նասիկ» կանուանէր զինք). խելքս չի հասնիր թէ թող ինչպէս կուտաս քեզ փետուար ամ- տոյ թերթիմ մէջ հրատարակելու այնքան ա- նիմաստ գովեստներ քո անձիգ մասին. գովեստ- ներ որ «հոստական» են, ինչպէս կըսէր մըտ- րակողն Գրիգոր Արծրունի, որի ոգին այստեղ իսկ կը շարունակէ հեգնել քեզ ու խնդալ վրադ: Նամանաւանդ ինչպէս կը յանդգնիս յայտարարել թէ դու «Պիւլին գնացած հայ պատգամաւորութեան հոգին» իբր եղած լի- նիս: Ես չէի կարծեր բնաւ թէ այդպիսի ան- միտ կերպիւ կարող էիր հրապարակել այդ աստիճան մեծամասնութիւն: Ես չէի կարծեր թէ երբ և իցէ պիտի յաւակնէիր յափշտակել խը- րիմեանի, Նար Բէշի, Ստեփան Փափազեանի արդար իրաւունքը, մինչդեռ աւաղ, այժմ դի- ալիք համարէք կը դարնես զանոնք ու զքեզ կը ներկայացնես այդ դիալիկն կեանք, գործու- նեութիւն ընծունող շունչը, միակ անհրաժեշտ «հոգին»: Ամօթ է, տղաս, ամօթ է, ուշքի եկուր, խելք ունիս՝ գլուխդ ժողովէ... Պեռ- լինի վեհաժողովին ժամանակ, քան տարի ա- ռաջ, դու տակաւին դեռատի, տհաս պտտանի մէկը, և զքեզ զօգնեցի որպէսզի խրիմեանին գրագրութիւն ընես և Ֆրանսերէն լեզուն գիտ- նալուդ համար՝ Թարգման լինիս: Խրիմեանը քեզ տղայ կը նկատէր և միշտ գլխուդ խը- րաններ կը կարգար Ափսոս, անօգուտ... Տը- ղանս, ամօթ է, ալ այդպիսի խօսքեր չընես եր-

բէք, որովհետեւ անպատուութիւն է ազգիս հա- մար որ քեզի պէս տղայ մը «հոգի» եղած լի- նի Պեռլինի հայ պատգամաւորութեան... այ- սոր դու եղած ես ալ տարիքոտ՝ նորէն տղայ ես մնացեր... վերջապէս այդ խօսքէդ իմ ա- նունս է որ պիտի ծաղրէ ազգը...»

«Նամակը կաւարտէր քանի մը խիստ յան- դիմանութիւններով:

Սակայն ահա սփոփանք մը երեցս վշտահար «հայրենասէր» սրտին՝ շնորհիւ ալֆարի-ար- փիարա-Ֆրա՝ քականների որովք բնական բեր- մամբ եր. իրագրական սերտ կապերով կու- ղեն կապիլ «Միւսսիկի» հետ: Տխմարները, ի մեծ միւլթարութիւն այդ վերջնոյն, իրենց դաւերը լրացնելու համար սկսած են դժբերջօ- տական հողմային պատերազմ հրապարակել Ռու- սահայ յեղափոխական գործիչների դէմ: Էջը կորուսած և փորն անօթի մնացած Սանխօ-Պան- խօյի նման այդ անգլուխ էակները կը պօռան թէ «Ռուսահայ գործիչները թիւր քահայ յե- ղափոխական ասպարեղէն դուրս ելին»... դը- րամակուլ մատնիչ Արփիարեանը իր արբան- եակներով անշուշտ կը տենչան յեղափոխա- կան ասպարեղը իրենց մենաշնորհաւ վայ- րը դարձնել լաւ մասնելու, լաւ խաբելու և լաւ գողնալու աղատութիւն ունենալու համար՝ անպատիժ կերպիւ...»

Եւ այս նորագաւաւն դօն-քիչօսները իրենց գործն ու ջանքը մեծ ցոյց տալու դիտուով «նգլիսօրէն գլուխներ ու գլխիկներ փնտռելու հետ» մուտ են, և ուրտեղէն կարող էր արժա- նաւոր գլուխ մը գտնել ի թէ ոչ Եգիպտոսէն, այն երկրէն ուր փուսած է իրենց նախահայրը՝ Ալֆարին: Եթէ Գիոգենէսի լապտերով իսկ փնտռէին չպիտի կարենային ձեռք բերել այդ- պիսի համապատասխան գլուխ մը, գլուխ մը, որ լաֆնութենի գորտին նման կովի չափ խո- շոր դառնալու յաւակնութիւն ունենալով, կարող է ճաթիլ, բայց Ալֆարիականք, կան- խատեսներով այդպիսի աղետարշ ու միանգա- մայն նողկալի վտանգի մը պատահականութիւ- նը, որոշած են նախապէս խաշել այդ գլու- խը միայն (որովհետեւ մարմինը բոլորովին ան- պէտական է), վրան մի քիչ աղ ու կարմիր պղպեղ ցանկէն և փուռի մէջ կարմրեցնելն յետոյ պիտի բերեն կանգնեցնեն անպուր- ուսեղուն վրայ:

Թարտիֆական քմծիծաղով և ձէթով լի տակաւի մը մէջ զետեղած այդ մարմնատեալ «պաշ»ը կոշխատէին միջերկրականի ա- լիքներէն շորորուն բերելու դէպի այս կողմ, սակայն զուարճալին հոն է որ իւր սեփական աշաղուն մարմինը կորցնելէն յետոյ հոս ալ ոչ պատուանդան ոչ կայան պիտի գտնէր. խեղճ «պաշ», և ահա ինչ որ պիտի պատմեմ քեզ լօնդօն կատարած իրողութիւնմ՝ է:

Արդեօք խաշած պէինիդ մէջէն կ'անցնի թէ ինչեք դարցան Frithville Gardens ի թիւ 99-ի վեհարանիդ մէջ. աւաղ Պոմպէի աւե- րակների հետքէն աւելի դժուարին է այդտե- ղում գտնել Ալֆարի Ֆրանքականների հետքը. որովհետեւ, Փանթոնների նման, այդ անգլուխ մարմին բոլոր անդամները ցիրուցան եղած են դողահար: Ուսերը չեն գիտեր ուր կը գտնուին ձեռքերը, ոտքերը չեն գիտեր ուր պահած է փորը և կոկորդը մնացած է անսուղ: Մի շա- բաթ առաջ բաղդը զիս մղեց հաստափոր Ալ- ֆարիի այդ պաշտօնատան կողմերը, մի երկու ոստիկան դէպի այն կողմ կը յառաջանային. թիւ 99-ի վերի պատուհանէն նշմարեցի Տա- մատեանը որ աղեկաւոր կոչերով «օգնութիւն», «փօլիս» կ'աղաղակեր: Իսկ վարեն Ալֆարիա- կանաց վարչութեան մեկ անդամը կարեկուտի նման հայհոյանքներ կը թափէր Տամատեանի վրայ. «Աւազակներ», «մատնիչներ», «գաւա- ճաններ» «սրիկաներ», «խաչագողներ». Ես, ես գիտեմ ձեր ամեն խարդախութիւնները և ցոյց պիտի տամ աշխարհին...» Ալֆարիականաց կեդրոնական վարչութեան այդ ճարտասան ան- դամը պատմեց թէ իրենց վարչական անդամ Սուրեն անուն անձն իրմէ 10 սպի գողնալով

Արփիարի հետ փախած է չը գիտեն դէպի ուր. թէ Տամատեան ևս կուգէ փախչել, թէ ինքը հաշիւներ ունի կարգադրելիք այդ գաւաճան- ների հետ, թէ իրենց 99 թիւ պաշտօնատա- նը, որ պարզապէս գողերու որջէ մը տարբու- թիւն չունի, այժմ պարտաւ է և կը մնայ ընդ հրամանատարութեամբ անգլիացի տանտի- րուհիին... և լցցի բանն զի, ասացի Ալ- ֆարի-Արփիար-Ֆրանք. Շիլին: Եւ տարա- կոյս չունիմ որ այդպիսի ձեպընթաց անուանա- փոխութեամբ կարգը կը մօտենայ քօփ էքին...»

Արփիարական խմբակը այդպիսով ունեցան իր փախճանը, նոյնչափ խայտառակ և ստոր վախ- ճան, որպէս եղած էր իւր ծնունդը...

«Միւսսիկ», հարկ է որ թերթիդ յառաջի- կայ թւոյն ճակատին, սե շրջանակի մէջ այդ խմբակին կորստեան վրայ արցունք թափես հե- տեւալ ողբերգութեամբ:

«Ողբամ զքեզ, արշակաւան...»

ԽԱՐԱԶԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՒՄ.

- Ուրեմի, սիրելի Մուստաֆա, կ'երեւի գոր- ծերը աղեկ չեն երթար:
- Ըստ երևութիւն, գուցէ, ով մեծդ Ապ- տիւլ Համիտ, բայց ոչ ըստ իրականին:
- Ինչպէս, միթէ խելքդ փապուճիդ մէջ է փախեր, Մուստաֆա: Զեն տեսներ որ բոլոր աշխարհ կը պատրաստուի մեր վիզը ոլորելու:
- Ինչ կը թւի թէ Պետութիւններէն ոմանք եւրօպական համաձայնութիւն կը խրատեն:
- Ար հաւատաս:
- Միւսսիկ Պետութեանց համաձայնութիւնն գոյացնելը մենք աշխարհի քթին կը խնդանք:
- Ատիկա իմ մեծագոյն բաղձանքն է, ով Մուստաֆա:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԹԷՆ-ՔՈՒՄ.

- Եթէ Պետութիւնները յամառին մեզ այսպէս կաշկանդել ուղղելուն մէջ, մեր բանը բուրդ է:
- Մի վախենար, քիթի չորձի, այդ անանկ երեւոյթ մը է որ պատահելիք չունի:
- Ո՞րը:
- Թէ Պետութիւնները համաձայն են ի- րարու մէջ:
- Այլ սակայն մեծ ձայնով կը պոռան թէ համաձայն են:
- Իսկողատակութիւն է:
- Երբ համաձայն են մասամբ իրար փոս փորելու համար:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԼՕՆԴՈՆՈՒՄ.

- Ինչ պիտի դուրս գայ բոլոր այս արեւել- եան օյինպաղութիւններէն:
- Եւ սիրելի չոն-Պոլսո, քանի որ Պետու- թիւնները համաձայն են, բնաւ բան մը դուրս գալիք չկայ:
- Ես երբէք չեմ ախորժեր այն բաներէն որոնցմէ ոչինչ դուրս չենել, ես կը ցանկամ որ միշտ կըծոն մեկնէ:
- Ատիկա ընելու համար պէտք է որ պե- տութիւնները խորտակեն իրենց համաձայնու- թիւնները:
- Շիշդ այդ է որ, քաղաքավարութեամբ, պիտի ջանամ ընելու:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ.

- Սարելի է ըսել թէ մենք հեռի չենք Մեծն Պետրոսի երազը իրականացնելէն:
- Ինչպէս, փոքրիկ Կօլեա, չէս տեսներ որ կուզեն բռնի պահել խաղաղութիւնը:
- Ես պատրաստ եմ պատերազմի:
- Իայց եթէ բոլոր պետութիւնները հա- մաձայն են:
- Երբ քեֆս ուզէ համաձայնութիւնը կը վերջանայ:

(Papagallo)